ՍԻՐՈՎ ԵՎ ԳՐԿԱԲԱՑ ԿՆԴՈՒՆԵՆՔ

Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու մասին ՍՍՌՄ Ժողկոմսովետի որոշումը պատմական մի իրադարձություն է։ Մենք սրտանց ողջունում ենք մեր կառավարության այս արդար որոշումը։ Սովետական Կառավարությունը այս որոշումով հնարավորություն է ստեղծում դարերով հալածված, տարտղիր ու բնավեր դարձած հայերին վերադառնալու իրենց Հայրենիք, միանալու Սովետական Հայաստանի իր եղբայրներին, մասնակից դառնալու խաղաղ, շինարար, աղատ ստեղծագործ աշխատանքի, ապրելու, գործելու իր իսկ հայրենիքում Սովետական Հայաստանում։ Նրանք հնարավորություն կստանան ստեղծելու նոր համամարդկային ավելի մեծ արժեքներ։

Սրտանց ողջունում ենք մեր կառավարության այս որոշումը։ Սովետական կառավարությունը, ինչպես միշտ, այս հարցում ևս ցուցաբերեց իր մարդասիրական վերաբերմունքը։

Այսօր, այս որոշումով արտասահմանի հայերը, մեր արյունակիցներն ու հայրենակիցները հնարավորություն են ստանում վերադառնալու Հայաստան։ Այս որոշումով տարտղիր հայ ժողովրդի երազած իղձերի կատարման սկիզբն է դրվում։

Մենք գրկաբաց ու սիրով կընդունենք արտասահմանի մեր եղբայրներին։

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

Ժողովրդական նկարիչ

(«Սովետ. Հայաստան» № 260, 1945 թ.)

ՍՏԱԼԻՆՅԱՆ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՅԻ ԱՐԵՎԻ ՏԱԿ

Ես պատկանում եմ այն երջանիկների թվին, որոնք առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին Թյուրքահայաստանում կազմակերպված հայկական բարբարոսական ջարդերից ազատվեցին և ապաստան գտան Անդրկովկասում։

1920 թվին ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ հայ ժողովուրդը վերջ տվեց դաշնակների մղձավանջային տիրապետությանը և Հայաստանում հաստատեց սովետական իշխանություն։ Այս եղավ հայ ժողովրդի պատմական կյանքի ամենամեծ եղելությունը, որից անցել է արդեն 25 տարի։ Բազմաթիվ հայ մանուկներ և պատանիներ հնարավորություն ստացան իրենց ձգտումներին ու ընդունակություններին համապատասխան կրթություն և մասնագիտություն ձեռք բերելու։

Իմ կյանքի օրինակը շատ բնորոշ է, ներկայացնում է հազարավորներին։ Ես իմ միջնակարգ և բարձրագույն կրթությունը ստացել եմ Սովետական Հայաստանում։ Համալսարանում սովորելու տարիներին ես ապահովված էի պետական թոշակով, ուսումս ավարտելուց հետո ինձ պահեցին համալսարանի ասպիրանտուրայում — սովորելու։ Ասպիրանտուրան ավարտեցի պաշտպանելով դիսերտացիա, «Ֆրիկի ստեղծագործությունը» վերնագրով և ստացա ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուի աստիճան, ապա և հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտի կոչում։ Արդեն 15 տարի է, ինչ Երևանի Մոլոտովի անվան պետական համալսարանում դասախոսում եմ հայ հին գրականության պատմություն առարկան։ Այս տարվա գարնանը «Գրիգոր Նարեկացի» վերնագրով իմ ուսումնասիրությունը համալսարանում պաշտպանեցի իբրև դոկտորական դիսերտացիա և ստացա ֆիլոլոգիական գիտությունների դոկտորի բարձրագույն գիտական աստիճան։ Այնուհետև համալսարանի գիտական խորհուրդը ինձ շնորհեց հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆեսորի կոչում։

Ունեմ հրատարակած մեծ թվով գիտական աշխատություններ և միջնակարգ դպրոցների համար գրականության դասագրքեր։

Մանկավարժական գործունեության և գիտական աճման ընթացքում ինչպես ես, այնպես էլ իմ բոլոր պաշտոնակիցները միշտ խրախուսվել են և մեր պարտիայի ու կառավարության կողմից ստացել ամեն տեսակի օժանդակություն։

Այժմ, երբ ՍՍՌՄ Ժողովրդական Կոմի-